

1115

№ ԳՐԱԴԱՐԱՆ „ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱ“ 21

ԲԺԻՇԿ Վ. Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Վեսէ ՊԵՏ. ՌԻՍՈՒՄ. ԽՈՐՀՈՂԵՔ
ՄԱՆԿԱՎ. ՍԵԿՑ. Կողմից բաւդա-
րված և առակերտության համար.

ԱՇԱԿԵՐՏԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱՀԻԹՅՈՒՆԸ

Ի՞նչ պետք է իմանա յուրաքանչյուր
առակերտ յուր առողջության մասին

6/3.6.37
Խ-28

Խ Ե 20 ԿՈՊ.

ՏԵ Բ 1, Խ 0 - 1928

613.6.37

№ 28

Գրադարան «ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱ»

ԲԺԻՇՎ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

№ 21.

Այսուհետեւ առաջարկութեան
ՄԱՍՆԵԱՎ. ՍԵԿՅ. ԿՈՂՄԻՑ ԹՈՒԼԱԾՈ-
ՎԱԾ Ե ԱՏԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.

200
202

ԱՃԱԿԵՐՏԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

1003
10508

Ի՞նչ ՊԵՏք Ե ԻՄԱՆԱ

ՅՈՒՐԱՔԱՆԶՅՈՒՐ ԱՇԱԿԵՐՏ

ՅՈՒՐ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2010



Թ. Բ. Յ. Ի. Բ. Ս.
1928

16233

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Առողջապահությունն այն գիտությունն է վոր մեզ սովորեցնում է, թե ինչպես ապրենք, վոր առողջ լինենք և հասնենք խորին ծերության:

Առողջապահության նշանակությունը շատ մեծ է ամենքի համար, մանավանդ աճող սերնդի համար: Մենք գիտենք, վոր չափահասներն այնքան շուտ չեն յենթարկվում հիվանդությունների, վորքան փոքրերը: Պատճառը պարզ է. փոքրիկների չամրապնդված որդանիզմը և քնքույշ որդաններն ավելի հեշտությամբ են յենթարկվում հիվանդությունների, մանավանդ դպրոցական հասակում:

Փոքր յերեխաները մանելով դպրոց, շատ հաճախ տրվում են աննպաստ պայմաններում՝ փոշոտ մթնոլորդ, վոչ մաքուր ոգ, և այլ և այլ սրանց ավելացրած և վատ սնունդը..., խիստ կերպով ազդում յեն երեխայի աճող կաղմվածքին.

«Աւակերտի առողջապահությունը» դրքույկը զալիս ե ցույց տալու դպրոցի այդ պահաս կողմերը և առաջադրում և այն բոլոր միջոցները, վարժոց դորձազրությամբ կարելի յե ապահովել աշակերտի ֆիզիքական և մտավոր կանոնավոր զարգացումը:

Մեր ծնողները, ինչպես դպրոցական բոլոր հարցերում, այնպես և առողջապահության ինդրում, պետք ե ակտիվ լինեն, հանուն աճող սերնդի առողջության:

Բ. Վ. Խաչատրյան

ՄԱՐՄՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Մաշկի խնամքի. Մեր մարմինը զրսից ծածկված է մաշկով: Մաշկն ունի ծակոտիներ, վորոնց միջնով դուրս են զալիս զանազան նյութեր, վոր անպետք են և վնասակար մեր մարմնի համար: Մաշկը միայն այն դեպքում կարող է իր կոչմանը ծառայել, յերբ նա մաքուր է պահպում: Մաշկը մաքուր պահելու համար մի կողմից անհրաժեշտ է հաճախախիկի լվանալ մարմինը, իսկ մյուս կողմից՝ հաճախ փոխել սպիտակեղենը: Մաշկն անմաքուր մնալով աղտոտվում է, նրա վրա առաջ են զալիս թարախոտ բշամիկներ, իսկ այդպիսի կեղտուած մարմնի վրա հեշտությամբ աճում և բազմանում են մակաբույծներ (պարագիտ):

Ինչպիս պես և հետեւի մարմնի մաքուրյան. Յուրաքանչյուր դպրոցական, շբաթական գոնե մեկ անգամ, պետք է լողանա տաք ջրով և ոճառով: Բացի զրանից, շատ լավ է, որական մի կամ յերկու անգամ շինել մարմինը սառը ջրով, վորով մի կողմից մեր մարմնի մաքրությանը նպաստած կինենք, իսկ մյուս կողմից նրա ամրապնդմանը:

Ի՞նչ կենանակի աւրապնդիլ: Քնքացած մարմինը սառը ջրի ազգեցությունից հետզհետե դառնում է դիմացկուն՝ շոգի և ցրտի նկատմամբ, այլևս չվախենալով փոփոխական յեղանակից և միջանցուկ քամուց (ԾԲՅԱԿ):

Առավոտյան սառը շփումներից հետո պետք է կատարել մի քանի մարմնամարդական շար-

ժումներ. թույլ մարզիկ կարսղ են սենյակի մեջ մի քանի անգամ անց ու դարձ անել: Յերեկոյան շփումները պետք ե կատարել անկողին մանելուց առաջ: Մի քանի որ սենյակի ջրով շփումներ անելուց հետո կարելի յե անցնել ավելի սառը ջրի: Այդպիսով մենք սովորում ենք ցրտին և մեր որդանիզմը այլևս չի վախենա մրսելուց:

Մեր մարմինը կարելի յե աւրապնդել յեվ ոդի միջոցով: Մարմինը ողով ամրապնդելն այն ե, վոր հետզետե և պարբերաբար մեր մարմինը վարժեցնում ենք ողին—մերկանալով: Այս վանաները սովորաբար ընդունում են բացովյա, բայց կարելի յե և սենյակում, պատուհանները բաց թողնելով: Սա կատարվում ե հետեւյալ յեղանակով: Ողային վանանաները սկսում են ամառը: Որվա տաք յեղանակին մերկանալով, սկզբում միայն մի քանի բոպե, ապա ավելի յերկար ժամանակ, վաս յեղանակներին նույնը պետք ե շարունակել, բայց փակ սենյակում: Վարժվող մարզը մերկ մնալ կարող ե ամառ ժամանակ 1—2 ժամ, իսկ ձմեռ ժամանակ միայն մի քանի բոպե: Յերբ մեկն արգեն սովորել ե ողային լողարաններ ընդունելուն, նա այլևս չպետք ե դադարեցնի այն:

Ողային լողարանները լավ ե ընդունել տուփույն ժամերին, կարելի յե և հետո, բայց վոչ շուտ, քան ուտելուց 2 ժամ հետո:

Սառը ջրի շփումները պետք ե կատարել ամբողջ տարին: Ամառ ժամանակ առանձնապես լավ ե ազդում ծովի կամ գետի մեջ լողարալը: Բայց զրա համար պետք ե իմանալ վորոշ կանոններ, թե-չե, լողանալը ողուտի փոխարեն, վաս կրերի:

Սառը ջրին անսավոր մարզը պետք ե աստիճանաբար ընտելանա: Սկզբի որերին պետք ե լողանալ կեսորվա ժամերին, յերբ ջուրը բավականաչափ տաքացած կլինի արևից: չպետք ե ջրի մեջ յերկար մնալ: Ջրի մեջ չմըսելու համար պետք ե շարժումներ անել: Վորքան ջուրը սառը լինի, այնքան ավելի քիչ պետք ե մնալ նրա մեջ: այսպես որինակ 12^o ջրի մեջ կարելի յե մնալ, ամենաշատը 3—4 բոպե, այն ել խորը շնչառություն և շարժումներ կատարելով: սառը ջրից դուրս գալով, անմիջապես պետք ե լավ ցամաքացնել մարմինը: Նախքան ջրի մեջ մտնելը պետք ե զույգը թրջել: չպետք ե մտնել ջրի մեջ քրտնած կամ տաքացած մարմնով: վնասակար ե նույնպես լողանալ ուտելուց անմիջապես հետո:

Սառը ջրով լվացումները և շփումները թարմացնում են մեր մարմինը, արյան շրջանառությունը արագացնում, վորի շնորհիվ մեր մարմինի հյուսվածքն ավելի լավ ե մնունք ստանում և մեր արամազրութույնը բարձրանում ե: Լողանալը լավ ե ազդում նաև ախորժակի վրա: Ինչ վերաբերում ե բազանիքներին, պետք ե ասել, վոր տաք ջուրը, բացի վերոհիշյալ լավ կողմերից, նաև շատ լավ մաքրում ե մեր մարմինը կեզտից: Ինչպես սառը, նույնպես և տաք ջրում լողանալը կարող ե վասակար լինել թույլ յերեխաների համար և այն գեպքում, յերբ մեկի սիրտը և թոքերը հիվանդ են: Ահա թե ինչու պետք ե ամեն մի մարդ գիմի բժշկին, սլարզի իր սրտի և թոքերի զրությունը:

Դիսի մագոս մասերի աւողչապահություն: Պետք ե ուշադիր լինել գլխի մազոտ մասերի

մաքրությանը: Քրտինքն ու ճարպը արտադրով վելով մաշկի ծակոտիներից, խառնվում են փոշու հետ, կեղաստում մեր մազերը և զլիսի մաշկը ծածկում կեղափ շերտով. դրանից մաշկը բորբոքվում է, իսկ ձրիակեր միկրոբները այդտեղ լավ սնունդ գտնելով, արագորեն բազմանում են: Անհրաժեշտ ե 3—4 որը մեկ անգամ տաք ջրով և ոճառով գլուխը լավ լվանալ: Մազերը պետք ե կարծ խուզել, իսկ ամառ ժամանակ նույնիսկ ածիւել. այդիսով հնարավոր կլինի ամեն որ հեշտությամբ գլուխը լվանալ:

Շատ հաճախ փոքր յերեխանների զլուխը, մեծ մասսամբ աղջիկների, մեծ քանակությամբ անիծ և ընկնում. անիծներից ազատվելու համար պետք ե զլիսի մազերը յերեկոները նախթով լավ շփել, գլուխը թաշկինակով (Կօսինկա) փաթաթել, իսկ հետեյալ առավոտը տաք ջրով ու ոճառով լվանալ և սանրել խիտ սանրով: Յեթե անիծները այնքան շատ են, վոր մեկ անգամով չեն վերջանում, պետք ե նույն բանը կրկնել, վորից հետո անիծները բոլորովին կվերջանան (նավթը լուծում ե անիծների սոսնձանման նյութը, վորով նրանք կպած են լինում մազերին):

Յերեսի յեվ ականչների առողջապահություն: Անհրաժեշտ ե որական մի քանի անգամ յերեսը լվանալ: Առավոտները լվացվելիս պետք ե թաց մատերով ականջների մեջը լավ մաքրել: Յեթե ականջները հաճախակի չմաքրեք, այն ժամանակ թմրկաթաղանթը կկեղաստուի, վորի բորբոքվելով կառաջանան զանագան հիվանդություններ. դրանից մարզը վատ կլիսի և նույնիսկ կարող է խլանալ:

Աւամների առողջապահություն: Ամենքին պետք ե հայտնի լինի, վոր կանոնավոր մաքրողության համար պետք ե ունենալ առողջ ատամներ:

Ամեն անգամ, ուտելուց հետո, պետք ե բերանը վողողել ջրով, իսկ ատամները մաքրել խողանակով և ատամի բավ տեսակի փոշով: Առանձնապես անհրաժեշտ է ատամները մաքրել գիշերը քննելուց առաջ: Յեթե չհեռացնենք մեր ատամների արանքներում մնացած կերակրի մնացողները, այն ժամանակ դրանք կհոտեն և պատճառ կդառնան՝ մի կողմից մեր ատամների փչանալուն, իսկ մյուս կողմից բերանից վատ հոտ գալուն: Յերբեմն բերանից վատ հոտ գալու պատճառը լինում են սասամոքսի զանագան հիվանդություններ. այդպիսի գեպքերում պետք ե դիմել բժշկին:

Ատամների արանքներում մնացած կերակրի մնացողները յերբեք չպետք ե հեռացնել մետաղյա իրերով (տսեղով, քորոցով), այլ միայն փայտի բարակ ձողիկով, կամ սաղի փետուրով: Ատամների վրա շատ վատ ե ազդում նույնպես տաք կերակրից կամ թեյից հետո անմիջապես սառը ուտելիք կամ խմելիք գործ ածելը: Զերմության փոփոխության ազդեցությունից ատամների եմալը շատ շուտ փչանում է: Շատ վեսսակար ե նույնպես ատամներով կաղին, ընկույզ և նման պինդ բաներ կսորելը:

Յեթե ատամը նույնիսկ մի փոքր վնասված է, պետք ե անմիջապես դիմել ատամնաբուժին: առհասարակ լավ կլինի ատամները յերեմն ցույց տալ ատամնաբուժին:

Վունեների յեվլ յելունգների առողջապահություն։ Հարկավոր ե, գիշերը քնելուց առաջ վոսները մաքուր լվանալ, փոշուց և քրաինքից մաքրելու համար. այս միջոցով կարելի յե ազատվել նաև վոտների անդուրեկան հոսից։ Յեղունգները պետք ե կարծ կարել, վորպեսզի կեղար և զանազան բակտերիաներ չհավաքվեն յեղունգների տակը և պատճառ շդառնան հիվանդությունների։ Վոտների յերկար յեղունգները բացի այն, վոր ծակում են գուլպանները, շատ անգամ մտնում են մաշկի մեջ, վոր կարող ե վատ հետևանքներ ունենալ։

Տեսողության առողջապահություն։ Դրաբոցական շրջանի ամենատարածված հիվանդություններից մեկը պետք ե համարել կարճատևությունը։ Կարճատեսության դիմավոր պատճառը վատ լուսավորության մեջ պարագեն ե։ Կիսամություն սենյակում պարապելիս աշակերտի տեսողությունը խիստ լարվում ե, վորի հետևանքը լինում ե աչքերի շուտ հոգնելը և կարճատեսությունը։ Թույլ լույսի տակ պարապելիս աշակերտը ստիպված դիրքը կամ տեսարը շատ մոտ ե պահում աշքերին։

Աշակերտներից շատերը վատ սովորություն ունեն նույնիսկ լավ լուսավորության ժամանակ գիրքը շատ մոտ պահել աշքերին, կամ գուտիր կախ դցել գրքի վրա. այս բանը նույնպես նպաստում է տեսողության թուլանալուն։ Զբաղութիւնուարկան պետք ե աշքից 30—35 սահմանիմետր հեռավորության վրա գտնվի։

Միայն ե և այն, վոր աշակերտները գտների սերսովությունը թողնում են յերեկոյան ժամին,

արհեստական լույսի տակ։ Պետք ե իմանալ, վոր ձրագի լույսի տակ պարապելը շատ ավելի շուտ է հոգնեցնում տեսողությունը։ Նույնպես վասակար ե կարդալ արեգակի տակ և շատ խիստ լուսավորության ժամանակ։

Աչքի, տեսողության այդ նուրբ գործարանի, հիվանդության ժամանակ անմիջապես պետք ե դիմել ակնաբուժին։

Հագուսի յեվլ կոչիկների առողջապահություն։ Հայտնի յե, վոր հագուստը մեզ պահպանում ե ցրտից, անձրեկից, արկեց և այլն։ Զմեռը մանավանդ մենք կարելք ունենք առողջապահիկ հագուստի։ Հագուստները պետք ե լինեն հարմար և նրանք մեզ չպետք ե ճնշեն։ Նեղ հագուստը խոշնդում ե լինում արյան կանոնավոր շրջանառության և մարսողության։

Մանկական հասակում նեղ և սեղմող հագուստը թույլ չի տալիս մանկական քնքույշ և թույլ որդանիզմն ազատ զարդանա։ Առանձնապես վնասակար են զանազան տեսակի կապանքները և նեղ կոշիկները։

Սպիտակեղենի համար պետք ե վերցնել բամբակյա կարոներ, վորովհետև նրանք լավ են ծծում մեր մաշկից դուրս յեկող քրտինքը։ Վերեկի հագուստները, ըստ տարվա յեղանակի, պետք ե լինեն ձմեռը տաք, բրդե, իսկ ամառթեթե և բաց գույնի։ Կաշկի և ոետինի հագուստները առողջապահության տեսակետից անթույլարելի յեն։ Նրանք թույլ չեն տալիս մեր մաշկից ազատ դուրս կալ գոլորշիներին և ցրվել ողի մեջ։

Գալով կոշիկներին, պետք ե ասել, վոր այնքան շատ տարածված վոտքերի կոշտերը հետեւ վանք են նեղ կոշիկների՝ և բարձր կրունկների: Կոշիկները չպետք ե լինեն և շատ լայն, այլ ազատ նստեն վոտներին: Առանձնապես ուշադրություն պետք ե գարճնել յերեխաների կոշիկների վրա, քանի վոր նրանք ամբողջ ժողովական շարժողության մեջ են, խաղում և վազվում են:

Հագուստի խնամք. Յերեխաները փոքր հասակից պետք ե սովորեն հագուստի մաքրապահության: Հագուստը հանելով, պետք ե թափտալ, խողանակով մաքրել և կախել պահարանում: Սենյակում հագուստը մաքրել չի կարելի, քանի վոր մենք գիտենք փոշու մեջ մեծ քանաքությամբ բակտերիաներ են լինում:

Յերեկվա սպիտակեղենը գիշերները պառկելուց առաջ պետք ե հանել և հագնել գիշերային յերկար շապիկ: Վոտաշորով քնելը ֆնասակար ե: Գիշերը պառկելուց առաջ հագուստը պետք ե շնորհըսկ ծալել, կամ կախել և վոչ թե բարձի տակ դնել, ինչպես անում են յերեխաներից շատերը: Յերեկվա սպիտակեղենը հանելով պետք ե փոխել, վոր քրտինքից ցամաքի: Սպիտակեղենը պետք ե շաբաթական 2 անգամ փոխել:

Անկողինու առողջապահությունը: Անկողինը ինչպես գիշերվա համապատի վայր պետք ե հարմար լինի, վոչ շատ փափուկ և վոչ կոշտ: Շատ փափուկ և տաք անկողինը խիստ կերպով տաքացնում և քրտնացնում ե: մեր սիրտն սկսում ե արագորեն աշխատել, վորից և խան-

գարվում ե մեր քունը: Վերմակը պետք ե լինի թեթև, անպայման սավանով ծածկված: Անկողինու սպիտակեղենը պետք ե հաճախակի փոփոխել: Առավոտը անկողինուց յերեխով, պետք ե մի քիչ ժամանակ բաց թողնել անկողինը, վոր գիշերվա քրտինքը ցամաքի: Լավ յեղանակներին անհրաժեշտ ե շաբաթական 2 անգամ անկողինն արևի տակ փոել: Արևը ամենալավ և ամենաաժան ախտահանիչ միջոցն ե: Անթույլատրելի ե զանազան ձրիակերների՝ բաղկնջների, լուերի և միջատների ներկայությունը անկողինում: Պետք ե կորիվ մղել այդ պարագիտների դեմ, մաքրելով նրանցից անկողինը:

Աշակերտական պիտույքների առողջապահություն. Ինչպես սկզբում ել ասպեց, յուրաքանչյուրը պետք ե ճշգրիտ տեղեկություննենա անձնական առողջապահության մասին: Աշակերտի տետրերը, գրքերը և մնացած բոլոր գրենական պիտույքները պետք ե լինեն վերին աստիճանի մաքուր: Ամեն որ սենյակը մաքրելուց հետո պետք ե մաքրել նաև գրասեղանի և նրա վրա գտնված բոլոր իրերի փոշին: Շատ հաճախ գրքերը պատճառ են գառնում զանազան վարակիչ հիվանդությունների տարածման: Առանձնապես պետք ե զգույշ լինել այն գրքերի հետ, վորոնք թոքախտավորների մոտ են գտնվել: Գիրքը թերթելիս յերբեք չպետք ե մատը բերանը տանել. այդ ձևով շատ հեշտությամբ կարելի յե վարակվել:

Հասարակական առողջապահության տեսակետից, պետք ե պարտադիր գարճնել գրադարանների ախտահանությունը, գոնե ամիսը մեկ անգամ:

Վատ սովորություն ե, նույնիսկ վտանգավոր, գրիչը կամ մատիտի ծայրը բերան դնելը: Յես ինքս տեսել եմ այդպիսի թունավորման դեպքեր գրչից և մատիտից:

Սննդի առողջապահությունը: Մեր կյանքի պահպանման համար անհրաժեշտ ե պարբերաբար մեր մարմին մտակարարել սնունդ: Վորպեսզի իմանանք թե ի՞նչ տեսակի մնունդ ե հարկավոր մեզ, մենք պետք ե իմանանք, թե ինչից ե բաղկացած մեր մարմինը:

Մեր մարմին մեծ մասը կազմում է ջուրը, իսկ մնացած մասերը կազմում են՝ սպիտակուցային, ճարպային, շաքարային, հանքային մասեր և առանձին կենսատու նյութեր, վորոնք կոչվում են վիտամիններ:

Սպիտակուցն այն նյութն ե, վոր գտնվում է հավի ձվի մեջ: Սպիտակուցային մասերը մեծ մասամբ գտնվում են մկանների, արյան և նյարդային հյուսվածքի մեջ:

Սնունդը պետք ե ունենա համապատասխան քիմիական կազմություն: Նա պետք ե լինի պարզ, հեշտամարս, համով և մաքուր պատրաստված:

Սնունդը լավ ե համարվում այն դեպքում, յերբ նա պարունակում է իր մեջ բավականաչափ սպիտակուց, ճարպ, շաքարային մասեր՝ ածխածրածնատ և վիտամիններ: Վորպեսզի մարմինը բավականաչափ սպիտակուց ստանա, մենք պետք ե գործ ածենք միա, կաթ, ձու և այլն: Ածխածրածնատը գտնվում է շաքարի, հացի, գետնախնձորի, մրգեղնի և շատ կանաչեղների մեջ:

Սպիտակուցային նյութերը բջիջների կազմության համար են, իսկ ածխածրածնատը և

ճարպը մեր մարմին մեջ տաքություն առաջնելու համար:

Բացի վերև հիշվածներից, մեր մարմին համար անհրաժեշտ են և զանազան հանքային նյութեր, ինչպես որինակ աղ, վորի պակասությունը առաջ ե բերում զանազան հիվանդություններ: Կերակրի հետ բացի աղից ուրիշ հանքային նյութեր մենք չենք գործածում, վորովհետև նրանք բավարար չափով գտնվում են կանաչեղների մեջ:

Ինչպես ընդեղենների (ՕՅՈԱ), նույնպես և մի քանի այլ մթերքների մեջ կամ վիտամիններ: Վիտամիններ կոչվում են այն նյութերը, վորոնք թեկուզ չնչին քանակությամբ մտնելով մեր մարմին մեջ սննդի միջոցով, այնուամենայնիվ, անհրաժեշտ են մեր կյանքի համար: Պրոֆեսոր Ֆունկը, վիտամինների հիմնադիրը, իզուր չի ասում: «Ճկա կյանք առանց վիտամինների»: Սնունդը միայն այն ժամանակ կարող ե լավ մարսվել, մեր մարմին բջիջների կողմից լիովին ոգտագործվել, յեթե նրա մեջ կան վիտամիններ:

Կան զանազան տեսակի վիտամիններ, վորոնցից յուրաքանչյուրի բացակայությունը կարող ե վորոշ հիվանդություն առաջ բերել:

Այս վիտամինները, վոր ահագին նշանակություն ունեն մեր կյանքի համար, յերկար ժամանակ յեփկելիս բայցրայվում, վոչնչանում են: Այդ պատճառով մենք պետք ե իմանանք, վոր ընդեղենները յերկար ժամանակ չի կարելի յեփել. 15 րոպեն միանդամայն բավական ե:

Նույնիսկ այն ջուրը, վորի մեջ յեփկել և լիդեղեննը, չպետք ե թափել, այլ պետք ե ոգ-

տագործել կերակուրների համար, վորովհետև նրա
մեջ ե անցել վիտամինների մի մասը: Յեփելու
ժամանակ կաթսան պետք ե ծածկված պահել.
ապացուցված ե, վոր ծածկված կաթսայում վի-
տամիններն ավելի դանդաղ են վոչնչանում:

Պետք ե աշխատել վորքան կարելի յե շատ
ընդեղեն գործածել, ինչպես նաև թարմ մրգեղեն,
առանց յեփելու (կամ զոնե կիսայեփի): Նույնը
պետք ե ասել նաև կաթի (յեթե կովը առողջ ե)
և ձվի համար. սրանց հում կամ կիսայեփի գոր-
ծածեն ավելի ոգտակար ե, վորովհետև ավելի
շատ վիտամիններ են պարունակում:

Ինչ վերաբերում ե ուտելիքի քանակին և
ուտելու ժամանակին, պետք ե լինի հետեւյալ
կերպով: Առաջին նախաճաշը պետք ե անել առա-
վոտյան, դպրոց գնալուց առաջ, մոտ ժամը 8-ին.
յերկրորդ նախաճաշը դպրոցում, յերրորդ դասա-
միջոցին (ավելի փոքրհասակները 2-րդ դասից
հետո). ճաշել պետք ե ժամը 2-ից—3-ը: Պարագ-
մունքներից հետո անմիջապես ճաշելն այնքան
ել ցանկալի չե, ավելի լույլ ե մի քիչ հանգս-
տանալ և հետո ուտել: Յերեկոները յերեխաների
համար լավ ե թեյ և թեթև ընթրիք. իսկ քնե-
լուց առաջ հեշտ մարսելու մի բան. քիչ կաթ,
կամ թերխաշ ձու և կամ միայն միրզ:

Կերակուրը պետք ե ուտել հանգիստ և լավ
ծամել, վորպեսզի թեթևանաս ստամոքսի գործը:
Կերակուրը չպետք ե լինի շատ տաք: Ամեն որ
պետք ե զործ ածել ջրալի կերակուր. շատերը
չեն սիրում այն, բայց սուպն անհրաժեշտ ե,
վորովհետև միայն չոր կերակուրը շատ ե դրժ-
վարեցնում սննդարարության գործարանների

աշխատանքը: Վիտամինար և նաև շատ ջուր
խմելը ճաշելիս, կամ ճաշից հետո:

Նեւստուքյան առողջապահություն: Մեր
գոյության համար բացի կերակրից անհրաժեշտ
ե և մաքուր, թթվածնով հարուստ ող: Ամեն-
քին հայսնի յե, թե մարդիկ վորքան վատ են
զգում իրենց, յերբ յերկար ժամանակ խմբված
մնում են փակ սենյակում: Մարդիկ շնչելով
թթվածնով հարուստ ողը, արտաշնչում են ած-
խածնով հարուստ ող, վոր մեզ համար վիտա-
կար ե: Յերբ մենք փակում ենք սենյակի դռւն
ու պատուհանները և թույլ չենք տալիս արտա-
շնչած ածխածնով առատ ողը դուրս գնա սեն-
յակից և լցվի մաքուր ողով, այն ժամանակ մենք
ստիպված ենք լինում շնչել նորից մեր արտա-
շնչած ողը: Յերկար ժամանակ շնչելով այդպիսի
ող, մենք կարող ենք թունավորվել և մինչեւ իսկ
կարող ե մեզ հետ ուշագնացություն պատահել:
Այդպիսով մարդու զլուկին սկսում ե ցավել, սիրու-
խառնել և սրտի թթվոց առաջանալ. յեթե մի-
ջոցներ ձեռք չառնվեն և անմիջապես թարմ
ողով չլցնել սենյակը, թունավորվածը կարող ե
նույնիսկ մահանալ:

Պետք ե հետեւ, վոր սենյակի ողը միշտ
հարուստ լինի թթվածնով. այդ նպատակով
պետք ե պատուհանները բաց անել, վոր ողա-
վոխվի. մանավանդ դասարաններում, ուր մեծ
թվով աշակերտներ են լինում և այդ պատճա-
ռով ողը շուտ փշանում ե: Տաք յեղանակներին
պատուհանները շարունակ պետք ե բաց թող-
նել, հատկապես գիշերները. յեթե վոչ ամրող-

ջուպես, գոնեւ կիսավիճն։ Զմեռը քնիլուց տուած սենյակի ողը պետք է հիմնավիճն թարմացնել։

Ածխաթթու գազը ներկայանում է վորպես լավ սնունդ բույսերի համար, վորոնք արեգակի ճառագայթների ազգեցության տակ կուլ են տալիս ածխաթթվով հարուստ սղը, յուրացնում են ածխածնային մասը. իսկ արտաշնչում մաքուր թթվածին։ Ահա թե ինչու անհրաժեշտ է պահպանել և ինսամել բույսերին և ամեն կերպ աշխատել բուսականությունը զարգացնել։

Անհրաժեշտ է միայն իմանալ հետեյալը. բույսերը գիշերը արտաշնչում են ածխաթթու գազ և վորի պատճառով սենյակում դիշեր ժամանակ շատ վասակար է բույսեր, նամանավանդ ծաղիկներ թողնելը, վորոնք իրենց ուժեղ հոտով կարող են թունափորել ողը։

Սենյակի ողը ապականփում և նույնպես, յերբ սենյակում լվացք են անում, չորացնում, կերակուր յեփում և մանավանդ նավթի մեքենա (կերասինա) կամ պրիմուս վառում։


Ֆիզկուլտուրայի առողջապահություն։ Զիկարելի լինել բոլորովին առողջ, առանց կանոնավոր ֆիզիքական զարգացման։ Առողջության համար անհրաժեշտ է, վոր մեր մարմինը յերկար ժամանակ անշարժության մեջ ըլինի, այլ հաճախակի շարժման մեջ դրվի. մարմնի հանգիստ վիճակին պետք է հաջորդեն և կանոնավոր շարժումները՝ մարզանք. այնպիսի մարզանք, վորի ժամանակ մեր մարմնի բոլոր մասերը, բոլոր մկանները մասնակցեն և վոչ թե միային մի խումբ մկաններ։

1003
10508

Առանձնապես ուշագլություն պետք է դարձնել մեր սրտին և թոքերին, վորոնք մեր վոյության համար ամենախոշոր գերն են կատարում։ Այդ գործարանները (սիրտը և թոքերը) պետք է ավելի ուժեղ և ավելի աշխատունակ լինեն, քան այդ պահանջվում է կյանքի սովորական պայմաններում։ Մեր կյանքում պատահում են գեղքեր, յերբ սրտից ու թոքերից պահանջվում են ավելի մեծ աշխատանք, քան սովորական պայմաններում։ Որինակ փորձանքի ժամանակ, յերբ պահանջվում է արագ վազել, կամ յերբ կարիք է լինում զարդիվեր բարձրանալ և այն գեղքերում, յերբ սրտից պահանջվում է ավելի լարված աշխատանք։ Նույնը պետք է ասել և վորոշ հիվանդությունների ժամանակ. որինակ, մի թոքի հիվանդության ժամանակ մյուս թոքն ստիպված է կրկնակի աշխատանք կատարել։

Ֆիզիքական վարժությունների ոգուար ամենաքին պարզ հայտնի յե, սակայն, այդ վարժությունները չպետք է չափազանցությունների հասցնել. չպետք է խիստ հոգնեցնել մարմինը, թե չե, ոգուարի փոխարեն կատացվի միմիայն վնաս։

Ֆիզիքական վարժությունների բացակայությունը վնասվում է վոչ թե միայն փոքրերին, այլ և հասակավորներին։ Ֆիզիքական վարժությունները պետք է ավելի մոտ լինեն բնական շարժումներին. այդպիսի վարժություններ կարելի յե համարել, ինչպիս վոտով զբոսանք կատարելը, նույնպես ձիով կամ հեծանիվով գնալը, լողալը, թիվավրելը, և մարդարանոց խաղալը։ Խաղի ժամանակ մեր մարմնի բոլոր մկանները գրավում են շարժության մեջ և սահյդպիսով հավա-



սարապես զարգանում են և լավ ազդեցություն
ունենում մեր մարմնի առողջության վրա:

Դպրոցներում, նստակյաց աշխատանքի պատ-
ճառով, շուտ աարածվում ե վողնաշարի ծովելը,
կրծքի վանդակի տափակությունը և այլն: Այդ-
պիսի դեպքերում անհրաժեշտ է ուշ դարձնել ֆի-
զիքական վարժություններին, վորոնք հակազ-
դում են այդ անկանոնություններին և ուղղում:

Առանձնապես ուշագրություն պետք է դարձ-
նել կրծքի վանդակի, սրտի և թոքերի զարգաց-
մանը: Յեթե դպրոցական յերեխանները ամենորյա
շնչառության վարժություններ (խոր ներշնչել)
չկատարեն, այդպեսի յերեխանների վերև հիշված
գործարանները չեն զարգանա, ինչպես հարկն ե:

Շնչառության վարժությունների շնորհիվ, կրծքի
վանդակի լայնացման և սեղման թափն ուժեղա-
նում, մեծանում ե, վորով և թոքերը հնարավո-
րություն են ստանում ավելի շատ ող կլանել.
այդպիսով թոքերն ընդունում են մեծ քանակու-
թյամբ թթվածին, վորի առատությունը շատ մեծ
նշանակություն ունի մեզ համար:

Ֆիզիկական վարժությունները սպորտի ձեռվ,
պետք ե արգելվեն դպրոցներում: Սպորտը վաս-
սակար ե նրանով, վոր պահանջում ե ուժերի լա-
րումն, իսկ դրանից մեր որդանիզմը թուլանում ե.
յեթե մեկը հիվանդ ե (որինակ—սրտի հիվանդու-
թյամբ) և զբաղվում ե սպորտով, մինչև իսկ կա-
րող ե հանկարծամահ լինել:

Դպրոցականների վրա առանձնապես վատ ե
ազդում ֆուղբոլ խաղը: Դժբախտաբար մեզ մոտ
մատաղ սերունդը շատ ե տարգում ֆուղբոլով,
վորը պահանջում ե, ինչպես գիտենք, ուժերի խիստ

լարում և մեծ հոգնածություն պատճառում:
Ֆուտբոլը պետք է արգելվի մինչև 17 տարեկանը.
ավելի մեծ տարիք ունեցողներին միայն այն
գեղքում կարելի ե թույլ տալ, յեթե նրանք բո-
լորովին առողջ են և սրտի ամենաաննշան թու-
լություն անգամ չունեն: Մեզ, դպրոցական բժիշկ-
ներիս հայտնի յե մինչեւ անգամ մահվան դեպ-
քեր ֆուղբոլից: Աղջկեներին ընդհանրապես չի
թույլատրվում ֆուղբոլ խաղալ: Ինչ վերաբեր-
վում ե բասկետ բոլին, պետք ե ասել, վոր ավելի
լավ ե խույս տալ այդ խաղից:

Վ.ՈՒԵԼԻՑ ԽՄԻԶՔՆԵՐԻ. Վոգելից խմիչքների
վասակարության մասին ամենքը գիտեն. բայց
քչերն են, վոր խուսափում են այդ խմիչքներից,
այն-ինչ շատ-շատերը նույնիսկ իշարն են գործ
դնում: Վոգելից խմիչքների մեջ կա առանձնա-
հատուկ մի թույն, վոր ալքոհոլ ե կոչվում, դա
վասում ե մեզ, յեթե նույնիսկ քիչ ենք գործ
ածում, իսկ մեծ քանակությամբ ալքոհոլ գործա-
ծելս թունակորվում ե մեր որգանիզմը:

Ողին պարունակում ե մուսավորապես $40^{\circ}/_0$
ալքոհոլ, գինին $8 - 20^{\circ}/_0$, կոնիակը $50 - 55^{\circ}/_0$,
գարեջուրը $3 - 6^{\circ}/_0$: Ալքոհոլը, ինչ ձեռվ ել վոր
ընդունելու լինենք, այդ միենաւյն ե, թույն ե և
վատ ազդեցություն ե ունենում մեր մարմնի
վրա: Ալքոհոլային խմիչքները վոչ միայն այրում
են մեր բերանը, այլ և մեր ստամոքսի և աղիք-
ների պատերը: Յեթե մենք պարբերաբար և
յերկար ժամանակ այդպիսի խմիչքներ գործ
ածենք, գրանից խիստ կվասվեն մեր ստամոքսի
և աղիքների գեղձերը, վորոնք այլևս կդադարեն
մեր մարսողության համար անհրաժեշտ հյութեր

արտադրելուց, վորի հետևանքը կլինի մեր մարմնի հյուծվելը: Ել ավելի վաս և աղղում ալքոհոլը մեր ուղեղի վրա, քայքայելով նրա նյարդային հյուսվածքը: Բայց չե՞ վոր ուղեղը ամենակարեռը գոլժարանն է, մեր կյանքի կառավարողը և ղեկավարը: Ալքոհոլի մինչև իսկ ամենաշնչին քանակությունը բացասական ազգեցություն և ունենում մեր մտավոր գործունեցության վրա, թուլացնելով ուղեղի աշխատանքը:

Այն գպրոցական յերեխաները, վորոնք գործեն ածում ալքոհոլային խմիչքներ, մինչև իսկ թիչ քանակությամբ, հառաջադիմությամբ հետ են մնում գասընկերներից: Ողին, զինին և գարեջուրը խիստ թուլացնում են մեր հիշողությունը և ըմբռնման արագությունը:

Ալքոհոլը հաճախ պատճառ է գառնում սրտի հիվանդության, այն ինչ այդ գործարանը մենք առանձնապես պետք է խնամենք, վրովհետեւ դիշեր ցերեկ նա անընդհատ աշխատելով, շատ մեծ գործ է կատարում:

Սրտի անընդհատ աշխանտանքի շնորհիվ մեր մարմինը մնունդ և ստանում է իր գոյությունը պահպանում: Սիրտն իր կազմությամբ հիշեցնում է ջրմուղ մեքենան: Նա յուր կծկման ժամանակ դուրս է մղում ձախ մասում հավաքված արյունը և արյունատար անոթների միջոցով քշում գետի մեր մարմնի հեռավոր մասերը. այդտեղ նա մնունդ է առլիս մեր մարմնի հյուսվածքներին, վորոնք իրենց կողմից մեր մարմնի համար անպետք մասերը հետ են առլիս արյանը, վորը յերակների միջոցով հետ է բերում և հասցնում

սրտի աջ մասը: Արյան այս շնըջանառությունը կոչվում է մեծ օրջան: Արյան կազմությունը խիստ կերպով փոխվում է այս մեծ շրջանի ժամանակ. կորցնելով թթվածնի մասերը նա նորից կարիք ունի թարմանալու, թթվածնով հարստանալու: Այս նպատակով արյունը սրտից անցնում է թոքերը (գարձյալ շնորհիվ սրտի կծկման), վորտեղ և յենթարկվում է թթվածնի անմիջական ազդեցության: Թոքերից արյունը անցնում է սրտի ձախ մասը. արյան այս շրջանառությունն ել կոչվում է փոքր օրջան:

Սիրտը մի բոպեյի ընթացքում կծկվում և լայնանում է 70 մմամ. յուրաքանչյուր կծկման ժամանակ նա դուրս է մղում $\frac{1}{4}$ գրվանքա արյուն. ուրեմն որվա ընթացքում գուրս է մղում 800 փութ արյուն, մեր որգանիզմը կերակրելու համար: Ալքոհոլը ազդելով մեր սրտի մկանների վրա, թուլացնում է նրանց, լայնացնում, վորի պատճառով ել սիրտը չի կարողանում կատարել իր սովորական աշխատանքը: Թույլ սիրտ ունեցող մարդիկ լուրջ հիվանդությունների չեն դիմանում և մահանում են. իսկ ուժեղ սիրտ ունեցողներն, ընդհակառակը, յերկար դիմանում են և կովելով հիվանդությունների դեմ, հաղթում են:

Ալքոհոլը վատ է աղղում նաև շշառության գործարանի, թոքերի վրա: Ում հայտնի չե իմողի և ծխողի սաստիկ հազը: Ալքոհոլը վատ է աղղում և արյունատար անոթների վրա, վորոնց պատերին նստում է կրային մասեր. գրանից անոթների պատերը կոշտանում են, կորցնում իրենց առաձգականությունը և հեշտությամբ կարող են տրաքվել: Այս հիվանդությունը կոչ-

վում ե արտերիոսկլերոզ: Յեթե ուղեղի մեջ գտնված արյունատար անոթները տրաքվեն մարդն անմիջապես կլորցնի իր գիտակցությունը, կաթվածահար կլինի և մինչև իսկ կարող ե հանկարծամահ լինել:

Յեթե հիշելու լինեմ այն բոլոր հիվանդությունները և վնասները, վոր առաջ են գալիս ալքոհոլի գործածությունից մեզ շատ հեռուն կտանի: Ամփոփելով միտքս, պետք ե ասեմ. ամեն մի դպրոցական պետք ե իմանա, վոր ալքոհոլը քայլայիշ ե, նա մահ է, իզուր չե, վոր մի անգլիացի խորհուրդ ե տալիս գինետների ցուցանակների վշա գրել վոչ թե՝ «Այստեղ ծախվում ե ալիքնուային խմիչքներ», այլ գրել՝ «Այստեղ ծախվում ե մահ»:

Ալքոհոլի դեմ կռվելը պետք ե ամեն մի քաղաքացու պարտականությունը լինի. բարձր խմբերի դպրոցականներն առանձնապես պետք ե սրբողագանդա մղեն արբեցողության դեմ: Դպրոցներում պետք ե կազմակերպել հակաալքոհոլային ընկերություններ. պետք ե տպել պլակատներ, թերթիկներ, գրքույկներ, գրել հակաալքոհոլային հոգվածներ թերթերում և մեծ քանակությամբ տարածել ազգաբնակության մեջ: Ալքոհոլի դեմ կռվելու խնդրում մեծ ծառայություն կարող են կատարել մոգական լապտերները և դիապոզիտիկ նկարները:

ԾԽՍԽՈՏԸ ԹՈՒՅՆ Ե. Ծխախոտը վորպեսուժեղ թույն վաղուց հայտնի յե: Այդ թույնով հին ժամանակները սպանում եին ոձերին: Հին ժամանակա բժիշկները այդ թույնով մտածում եին բժշկել վորոշ հիվանդություններ, բայց նո

այնքան խիստ եր, վոր թունավորում եր բժշկողներին: Գիտությունը ապացուցել ե, վոր ծխախոտի թույնը, մինչև իսկ ամենափոքր քանակությամբ, թունավորում ե վոչ միայն մարդկանց, ալ և կենդանիներին: Ծխախոտի մեջ կան զանազան թույներ, բայց ամենաուժեղ թույնը նիկոտինից մարդս շուտով մահանում ե:

Աժան ծխախոտը շատ ավելի թունավոր ե: 25 հատ պասիլիոսը ունի մոտ մի կաթիլ նիկոտին: Բայց ինչու մարդիկ ծխելով որական մինչև իսկ 50 հատ, կենդանի են մնում: Այս հարցին պատասխանելու համար պետք ե կըկնեմ վերեւում ասածու վոր մարդուս մարմինը վարժվում ե. մեր մարմի մեջ առաջ ե գալիս հակածխախոտային թույն, վորի շնորհիվ ծխախոտի թույնը ծխողին անմիջապես չի կարողանում սպանել, այլ միայն թունավորում ե: Թող վոչ վոք չկարծի, թե ծխախոտի թույնը առանց հետեանքի անցնում ե. վոչ. ծխողը միշտ, վաղ թե ուշ, կֆասվի: Իզուր չե, վոր հայտնի գիտնական Բուսկինը մեռնելիս ասել ե. «Եթե յես չծխեյի, ելի 10 — 15 տարի կապրեյի»:

Ծխախոտի թույնն անցնելով մեր բրոնխներին և թոքերին առաջ ե բերում լորձաթաղանթի բորբոքումն և թուլացնում ե նրանց գործունեությունը: Վիճակազրական տեղեկությունների համաձայն 100 թոքախտավորներից (բարակացավ) 95-ը ծխողներ են և միայն 5-ը չծխողներ: Ծխախոտն առանձնապես վնասում ե սրտին. նրա թույնն անցնելով արյան, խիստ կերպով ազ-

դում և սրաի վրա և թուլացնում նրա գործունեյությունը:

Ծխախոռը վնասակար ազգեցություն և ունենում նույնպէս՝ նյարդային համակարգության, արյունատար անոթների և ընդհանրապէս մեր բոլոր գործարանների վրա։ Ամենից շատ վնասվում և տուժում են ջաճել ծխողները՝ դպրոցական հասակի յերեխանները։

Դպրոցական յերեխանների քննությունը ցույց է տալիս, վոր չծխող յերեխանների հասակը 20 տոկոսով բարձր է, իսկ քաշը 25 տոկոսով ավելի յե, քան ծխողներինը։ 100 փոքրահասակ չարագործներից 83-ը ծխողներ են։

Ծխելը մեծագույն չարիք է։ Նա և սոցիալական չարիք ե։ Յերկրագնդի ամենալավ հողամասները (միլիոնավոր գեսայատիններ) ծածկված են ծխախոտի պլանտացիոններով, այն ինչ այդ լավ հողամասները կարելի եր ոգտագործել ուրիշ պետքական բույսերի կամ ուտելիքների համար։ Իսկ վորքան դժբախտություններ, հրդեհներ են լինում ծխելուց։ Վորքան անտեղի վարակման գեպեր են լինում, ծխախոտի մնացորդներ ծխելուց, վորով տարածվում են զանազան վարակիչ հիվանդություններ։ Իսկ յեթե հաշվենք, թե վորքան փող ե ծախսում յուրաքանչյուր ծխող մի տարվա ընթացքում, կտեսնենք, վոր նա այդ փողով կարող եր ձեռք բերել շատ ուրիշ անհրաժեշտ և ոգտակար իրեր։ Յեվ ինչո՞ւ համար են մարդիկ ծխում, ինչ օգուտ, ինչո՞ւ համար իրեն թմբացնել։ միթե մարդկանց մեջ չկա կամքի ույժ, հրաժարվելու այդ քայլքայիշ սովորությունից։ Ծխողները այնքան գերի են դառնում ծխե-

լուն, վոր մինչև իսկ չեն քաշվում իրենց արջապատող չծխողներից, վորոնց համար, շատ հաճախ, անդուրեկան և անտաճնելի յելինում ծխախոտի ծուխը։ Նրանք մինչև անգամ հաշվի չեն առնում հիվանդների, թույլերի և յերեխանների ներկայությունը և ծխելով թունավորում են նրանց։

Ծխելու դեմ պետք ե կռվել այնպես, ինչպես և խմելու դեմ։ Կոփվը պիտք ե լինի հասարակական։ Զե՞ վոր ծխելուց տուժում և հասարակությունը, առանձնապես աճող սերունդը պետք ե ըմբռնի ծխախոտի վնասակարությունը և խույս տա նրանից։

Դպրոցներում ծխելու դեմ պայքար մղելու ժամանակ առանձնապես մեծ դեր ունի կատարելու դպրոցական բժիշկը, մանկավարժական կազմի ներ միասին։

«Պիոները չի ծխում յեվ չի խեռան» լոգունգը պետք ե լինի լոգունգ ամեն մի աշակերտի համար։

Անդրկովկասյան կառավարության վերջին վորոշումը՝ հասարակական վայրերում և հիմնարկներում ծխելու մասին, պետք ե ամենախիստ կերպով իրականացնել կյանքում։

Քնի յեվ հանգսի առողջապահություն։ Հանդիսա և բավականաչափ քունը մեծ նշանակություն ունի մեր առողջության համար։ քունը թարմացնում է մեզ։ Քնի ժամանակ հանգստանում է մեր մարմինը։ Կյանքի բոլոր պրոցեսները (գործողությունները), վոր արթուն ժամանակ շատ ուժեղ են կատարվում, քնի ժամանակ թուլանում են, մեր մարմինց դուրս են դալիս բոլոր վնասակար նյութերը, վոր տու-

շանում են որվա ընթացքում, Փիզիքական և
ստավոր աշխատանքի ժամանակ:

Առանձնապես հանգստի — քնի կարիք ունի
մեր ուղեղը: Զե՞ վոր նա խոշոր աշխատանք է
կատարում նույն իսկ այն մարդկանց մոտ, վո-
րոնք Փիզիքական աշխատանքով են զբաղվում:

Վորպեսզի քունը լինի հանգիստ, անհրաժեշտ
են վորոշ պայմաններ: Ամենից առաջ մարդ
չպետք է զրդոված լինի. զրդոված ժամանակ
նախ չենք կարող քնել, իսկ յեթե քնենք ել,
քունը կինի անհանգիստ:

Դպրոցականները քնելուց առաջ չպետք է
կարդան ահավոր պատմվածքներ, չպետք է դըր-
դող խաղով զբաղվեն, վիճեն և այլն:

Քնելուց առաջ չպետք է դժվարամարս կե-
րակուր ուտել և վոչ ել շատ:

Ննջարանում պետք է լինի հանգիստ, ոդը
մաքուր, թարմ, տաքությունը՝ $10 - 12^{\circ}$ Ռեմյու-
րի. անկողնի մասին վերեսում արդեն ասված է:
Յեթե մեջքի վրա յենք քնում, ձեռքերը պետք է
անպատճառ վերմակի վրայից լինեն. իսկ յեթե
կողքի վրա, ձեռքերը պետք է դնել ականջի տակ:
Շատ վատ սովորություն է գլուխը վերմակի
մեջ փաթաթելը կամ գլուխը դեպի վառարանի
կողմը պառկելլ:

8—10 տարեկան յերեխաները պետք է քնեն
10—11 ժամ, 10—14 տարեկանները՝ 9—10
ժամ, 14—18 տարեկանները՝ 8—9 ժամ: Յերե-
խաները հենց վոր արթնանում են առավոտյան,
իսկույն պետք է հազնվեն:

Պետք է վաղ պառկել, վորպեսզի առավոտ-
յան դպրոց դնալուց 1 ժամ առաջ անկողնից

բարձրանալ, առանց շտապելու հազնիել լվացվել,
հախաճաշել և չուշանալ պարապմունքներին:

Դպրոցական փոքր յերեխան առավոտյան դըպ-
րոց զնալուց առաջ գասերով չպետք է սպարապի,
վոր չոգնի. դասամիջոցների ժամանակ նույնպես,
աշակերալ պետք է հանգստանա և վոչ թե կար-
դա կամ դասերը կրկնի:

Ճաշից քիչ հետո ավելի լավ է թեթև զբոսանք
կատարել, վորից հետո դասերը պատրաստել:
Յերեխաներն իրենք պետք է հավաքեն իրենց
իրերը և ոգնեն տան մեծերին, անսային աշխա-
տանքների մեջ:

ԱՌՈՂՋԱՄԱՍԻԿ ԿԱՆՈՆՆԵՐ ՅԵՎ ԼՈԶՈՒՆԳՆԵՐ ԴՐՈՌՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Եատ ոգտակար կլինի այս լոգունիքները սրա-
գել խուռոր տառերով յեվ փակեցնել դասա-
րաններում

Մարմելի առողջապահության լոգունիքներ

1. Հասեկը քո մաքությանը և շարաթա-
կան մեկ անգամ բաղանիք գնա:
2. Ունեցիր քեզ համար յերեսրիչ և յերեկ ուրիշ
յերեսրիչից մի ոգտավիր:
3. Գլուխդ հաճախակի լվա, իսկ մագերդ կարճ
խոռզիր:
4. Յեղունգներդ պահիր մաքուր և կարճ կտրած:

Աչի առողջապահության կանոններ

1. Աչքի ամենաթեթև հիվանդության դեպքում, առանց հնատագելու, աչքաբուժին զիմիր:
2. Յեթե աչքը մի բան ընկնի, մի տրոռիր ձեռքսվ, այլ բանելով արտևանունքից բարձրացրու վերին կողը, պահիր մի քանի վարկյան և ցած նայիր:
3. Յեթե վաս ևս տեսնում, խորհրդակցիր բժշկի հետ:

Ականջի առողջապահության կանոններ

1. Ականջիդ կեղուը մաքրիր զգուշությամբ բամբակով կամ մաքուր փափուկ կտորով. յերեկ չի կարելի ականջը մաքրել սուր և պինդ իրերով՝ լուցկով, գնդասեղով և այլն
2. Յեթե ականջի մեջ վորհե բան ընկնի ինքդ մի տշխատիր փորփիեւ, այլպիսով կարելի յե ավելի խորացնել. ավելի լավ և զիմիր բժշկին:

Քերանի առողջապահության կանոններ

1. Ամեն անգամ, ուտելուց հետո, բերանդ վազողիր:
2. Ատամներիդ վերաբերյալ հոգատար յեղիր:
3. Յեթե ատամդ քիչ փչացած ե, անմիջապես ատամնարույժին դիմիր և մի թողնի, վոր բոլորովին փչանա:
4. Ատամները պետք ե մաքրել ատամի փափուկ խոզանակով:
5. Ատամներով վոչ մի պինդ բան մի կոստրիր և ատամների արանքում մնացած կերակրի մնացորդները մետաղյու սուր իրերով մի մաքրիր.

Քնի առողջապահության կանոններ

1. Գառկիր և անկողնիցդ բարձրացիր վորոշակի ժամանակ:
2. Ավելի լավ ե, վաղ պառկել և ասավաները վաղ վերկենալ:
3. Քնելուց առաջ սենյակիդ ողը լավ մաքրիր:
4. Վորքան սենյակի ողը մաքուր լինի, այնքան ավելի քունը հանգիստ կլինի:

5. Քնելուց կհա ժամ առաջ, թող բոլոր պարապմանքներգ, նստիր հանգիստ և ազատ շահնչ քաշիր (ըստ հարավորության մաքուր ողում). խոսափիր կրգող բնթերցանությունից և խոսակցությունից:

Տնային պարապմունքների կանոններ

1. Առողջապահության այն բոլոր կանոնները, ինչ վոր պահմանջվում և դպրոցում, կատարիր և տանը:
2. Պարապմունքների ժամանակ ծայր հոգնածության մի հասիր:
3. Մթության մեջ մի կարգա և մի գրի:
4. Պառկած ժամանակ, ինչպես և ման գարիս, մի կարգա:
5. Պարապմունքի ժամանակ լույսը պետք և լոնկնի ձախի կողմից:
6. Յերկար ժամանակ դասերով մի զբաղվիր. ընդմիջում արա, վոր ուղեղով հանգստանա աշխատանքից:

Դասարանական առողջապահության կանոններ

1. Մի վազիր, մի խաղա և փոշի մի բարձրացնի դասարանում:
2. Դասամիջոցներին դասարանում մի մնա:
3. Խաղա չափավոր և հոգնածության մի հասցնի:
4. Հաճախակի մաքրիր դասարանի ողը:
5. Նստիր ուղիդ, կուրծքդ մի սեղմիր նստարանի յեղընի, մի հենքիր արմունքներից, իսկ վոտքերով հենքիր հաստակին:
6. Մի կարգա և մի գրի արևի և խիստ լույսի տակ:
7. Գրքի և տետրի վրա մի կախվիր, իսկ գրելիս տեսորդ քիչ թեք պահիր և վոչ թե ուղիդ:

Տնենի առողջապահության կանոններ

1. Ուտելու ժամանակ թող բոլոր աշխատանքներդ:
2. Վոչ շատ տաք և վոչ ել շատ սասը կերակուր մի ուղիր:
3. Կերակուրը դանդաղ և լավ ժամիր:

4. Ուսելուց հետո մի քնիր և մի վագվակիր. ավելի
լավ և հանգիստ նստել կամ պառկել:

5. Ուսելիքը յերբեք բաց մի թողնիր. լավ ծածկիր
և պահարանում պահիր.

6. Շատ մի կեր միանգամից. կեր քիչ-քիչ, բայց
հաճախակի:

Ենչառուքյան առողջապահության կանոններ

1. Խույս տուր փակված, փոշոտ և ծխոտ ողում
շնչելուց:

2. Որական մի քանի անգամ, մաքուր ողում պա-
րապիր շնչառական մարզանքով:

3. Շնչիր միշտ աղատ և խուսափիր ձնշող ոձիքից,
հագուստից և գոտիից:

4. Յեթև դժվարությամբ ևս շնչում քթով, դիմիր
բժշկին:

«Առակերտի առողջապահությունը» գրեալի յուրա-
խնչուր զուխր կարող է ծառայել վորպես նյուր սա-
նիստական-առողջապահական բովանդակությամբ հոդ-
վածներ գրելիս, գպրոցական.առակերտական պատի բեր-
րի համար:

ԼՈՒՅՍ ՏԵՍԱՎ ՅԵՎ ՎԱԶԱՌՎՈՒՄ Ե

ԲԺ. Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆԻ

Ի՞նչ ՊԵՏՔ Ե ԽՄԱՆԱՆ

ՄՐՏԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

ՅԵՎ ԱՐՏԵՐԻՌՈՍԿԵՐՈՉ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԸ

Թուսերեն լեզվով

Հետևյալ բովանդակությամբ

Սիրուը, արյունատար անոթները և սրանց դորձունեռթյունը. Արյուն և արյան ճնշումն. Սրտի հիվանդությունները. — Պերիկարդիտ, ենդոկարդիտ, Մի՛ՌԿԱՐԴԻՑ. ՄՐՏԻ ԱՐՍ.ՏՆԵՐ (пароки сердца). սրտի լայնացումն, սրտի թուլություն. ջղային սիրտ. առթափ լայնացումն (աներիզմա). Արտերիոսկլերոզ. Այս հիվանդությունների նախազգուշացումն. Զրաբաժություն. Բժշկությունը և թե ինչպես պետք և ապրի սրտի հիվանդություն ունեցողը. մնունդ և դիետա. Ալքոհոլային խմիչքների, ծիամոսի, ֆիզկուլտուրայի և սպորտի ազգեցությունը սրտի վրա:

Ծախվում և գրախանութներում. կարելի յե դիմել և հեղինակին. Թիֆլիս — Վագներիանական փող. № 8 բնակարան թ. 4. Խաչմարյանի:



2013



Բ. Փ. Պ. Խ Ա Հ Ա Տ Ր Յ Ա Ն Ի

Ա Շ Խ Ա Տ Վ Ո Ւ Թ Ե Վ Ա Ր Ե Ք

1.	Triphenylmonomethylarsoniumjodid und seine pharmak. Wirkung. (սպառ.)	
2.	Սիֆ. և Հաթա-Երկխյան «606»-ը (սպառ.)	15 կ.
3.	Сохранение здоровья (распр.)	
4.	Волосы	10 կ.
5.	Բազմածնություն, արվեստ. ամլություն և հակաբեղմանավորական միջ. Բ. տպագր.	25 կ.
6.	Անդրադարձ տիֆ (սպառ.)	20 կ.
7.	Բծավոր և վորովաճային տիֆ (սպառ.)	30 կ.
8.	Малокровие и его лечение	25 կ.
9.	Гигиена женщины выпуск I (սպառ.)	20 կ.
10.	Легоч. заболев. I книжка	25 կ.
11.	Ի՞նչ և վարակիչ հիվանդությունը (սպառ.)	15 կ.
12.	Վեներական ախտեր	20 կ.
13.	Առողջապահական դասընթաց (սպառված)	
14.	Медицинск. терминология	50 կ.
15.	Половые отклонения и пол. воспитание	30 կ.
16.	Համաճար. ինֆլուենցիա (սպառ.)	
17.	Աղիքների ճիճուները և սրանցից ազատվելու միջոցները	20 կ.
18.	Гигиена ученика	25 կ.
19.	Болезни сердца	60 կ.
20.	Ջովազու Յօցօյնա	
21.	Աշկերտի առողջապահությունը	20 կ.

Պահեստը հեղինակի մոտ՝

Տիֆլիս, Вознесенская ул. № 8. кв. д-ра Хачатрян.

Տպարան Պոլիգրաֆպրոց, Ա. Շերեթելու փողոց, № 3.

Գլամիլ 2172.

Տիրամ 8000.